Կարգապահական գործ թիվ ԿԳ-25061

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՐԵՏԱ ՎԱԶԳԵՆԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Մարետա Վազգենի Բաբայանի (արտոնագիր՝ թիվ 124) **(այսուհետև միասին նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Ինգա Լյոֆֆլերը **(այսուհետև նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև նաև՝ Պալատ),** հայտնել է, որ ինքը փաստաբանական ծառայություններից օգտվելու համար 2020թ. պայմանագիր է կնքել փաստաբան Մարետա Բաբայանի հետ: Փաստաբանի հետ քննարկվել է վարվող գործը: 2024թ. Փաստաբանի կողմից նախատեսված հաջորդ քայլը պետք է լիներ քաղաքացիական հայցի ներկայացումը դատարան: Դիմողը Փաստաբանին նախնական վճարել է 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ որպես ծառայությունների մատուցման վճար:

2024թ. նոյեմբեր ամսին հանդիպում է ունեցել Փաստաբանի հետ, ով հավաստիացրել է, որ հայցը ուղարկել է դատարան: Մինչև 2025թ. հունվարի 20-ը Փաստաբանի հետ Դիմողը և Դիմողի լիազորված անձը կապի մեջ են գտնվել, ում պարբերաբար տեղեկացրել են, որ հայցը դատարան չի մուտքագրվել: Փաստաբանը վստահեցրել է, որ ուղարկել է հայցը և կպարզի, թե ինչն է խնդիրը, որ այն դատարան դեռ չի հասել:

2025թ. հունվար ամսին Դիմողը և Դիմողի լիազորված անձը Փաստաբանից

պահանջել են ներկայացնել հայցը դատարան ուղարկելու փաստը հավաստող ապացույցը, սակայն Փաստաբանն առհամարական ձևով անջատել է հեռախոսը: Հետագա խոսակցությունների ընթացքում Փաստաբանը խոստովանել է, որ հայցը դատարան չի ուղարկել՝ պատճառաբանելով, որ խնդիր է առկա եղել, սակայն այդ խնդրի մասին երեք ամիս շարունակ ոչ մեկին չի զգուշացրել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրել է քննարկել Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Դիմումին կից ներկայացրել է Փաստաբանի հետ կնքված պայմանագրի պատճենը: Պայմանագրի «գործի տվյալները» հատվածում որպես պայմանագրի առարկա է նշված «Ինգա Լյոֆֆլերի գործով գումարի բռնագանձում» բառերը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 21.04.2025 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները</u>.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Մարետա Բաբայանին առաջարկվել է Օրենքի 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Ինգա Լյոֆֆլերի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 20.02.2025թ. թվականի բացատրությամբ ներկայացրել է 2020-2024 թվականների ընթացքում թիվ ԵԱՆԴ/1770/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով հայցադիմում ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ձեռքբերելու, նոր լիազորագրեր տրամադրելու և այլ հանգամանքների վերաբերյալ իր և Դիմողի լիազորված անձի միջև կատարված քննարկումների մասին:

Փաստաբանը նշել է, որ հանձնարարությունը ստանձնելու ընթացքում իրականացրել է մի շարք գործողություններ, կատարել է հարցումներ, տրամադրել խորհրդատվություններ, վարել բանակցություններ, կազմել հայցադիմում, ինչի մասին տեղյակ է եղել Ինգա Լյոֆֆլերի լիազորված անձը: Ավելին՝ հայցադիմումի օրինակն ուղարկվել է նաև լիազորված անձի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին:

Պայմանագիրը կնքելուց հետո մշտապես կապի մեջ է գտնվել Դիմողի լիազորված անձի հետ, ում հետ և հանդիպել է և ունեցել հեռախոսազրույցներ, ով տեղյակ է եղել գործի ընթացքից և պարբերաբար ստացել է տեղեկություններ կատարված գործողությունների և գործի ընթացքի վերաբերյալ, մինչդեռ Փաստաբանին ներկայացված տեղեկատվությունը և փաստաթղթերը եղել են թերի:

Փաստաբանը հավելել է, պայմանագիրը 2025թ. լուծելուց հետո ամբողջությամբ վերադարձրել է պայմանագրով սահմանված գումարը:

Վերոգրյալի և կից ներկայացվող փաստաթղթերի հաշվառմամբ, գտել է, որ Ինգա Լյոֆֆլերի կողմից ներկայացված դիմումն ամբողջությամբ անհիմն է:

Փաստաբանը դիմումին կից ներկայացրել է հայցադիմումի նախագիծը և այլ փաստաթղթեր:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 21.04.2025 թվականին Փաստաբաններին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 28.04.2025 թվականի բացատրությամբ հայտնել է, որ ելնելով գործի արդյունավետությունից, որոշել է գումարի բռնագանձման փոխարեն, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման հայց ներկայացնել դատարան:

Փաստաբանի պնդմամբ, Դիմողի և նրա լիազորված անձի կողմից թերի փաստաթղթեր ներկայացնելու պատճառով հայցադիմումը չի ներկայացվել:

Նշվածի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է Դիմողի ներկայացրած դիմումը ամբողջությամբ:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 28.02.2025թ. թիվ 107-Ա/ԿԳ-25061 որոշմամբ **փաստաբան Մարետա Վազգենի Բաբայանի** նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ **«Փաստաբանության մասին» օրենքի** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետև նաև՝ Կանոնագիրք)** 2.2.1-ին, 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման հատկանիշներով:

05.03.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Ծովինար Քուրքչյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 05.05.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-4-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 04.06.2025թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2,4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը 11.09.2020թ. պայմանագիր է կնքել Անուշ Զաքարյանի հետ՝ Դիմողի գործով գումարի բռնագանձման հայց ներկայացնելու համար: *Սույն փաստը հաստատվում է Անուշ Զաքարյանի և Փաստաբանի միջև 11.09.2020թ. կնքված իրավաբանական օգնության պայմանագրի* ***(այսուհետև նաև՝ Պայմանագիր)*** *4-րդ կետով:*

2. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը: ***Սույն փաստը հաստատվում է*** *Պայմանագրով,* Դիմողի կողմից Փաստաբանին տրված 11.09.2020 և 20.11.2024 թվականի լիազորագրերով:

3. Փաստացի Փաստաբանը ձեռնարկել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման ուղղությամբ: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ, դրան կից ներկայացված հայցադիմումով, ՀՀ կադաստրի կոմիտեի 01.09.2020 և 29.04.2021 թվականի, ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության 30.09.2020 և 29.12.2020 թվականի գրությամբ:*

4. Փաստաբանի կողմից ստանձնած գործի շրջանակներում Դիմողի անունից որևէ քաղաքացիական գործ չի հարուցվել: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի տվյալներով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքների համաձայն՝ **Մարետա Վազգենի Բաբայանը** փաստաբան է հանդիսանում 02.11.1989 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Մարետա Վազգենի Բաբայանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.1-ին, 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման համար, հետևյալ պատճառաբանությամբ՝

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված*

կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին

դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Դիմողներն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու և վստահորդի վստահությունը չարաշահելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***Արդյո՞ք փաստաբան Մարեփա Վազգենի Բաբայանը չարաշահել է Դիմողի վստահությունը:***
- ***Արդյո՞ք փաստաբան Մարեփա Վազգենի Բաբայանը բարեխիղճ իրավաբանական օգնություն է ցույց տվել Դիմողին:***

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողների և Փաստաբանների կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Անուշ Զաքարյանի և Փաստաբանի միջև 11.09.2020 թվականին կնքվել է Պայմանագիր, որով Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը՝ վերջինիս գործով գումարի բռնագանձման հայց ներկայացնելու համար, ինչի կապակցությամբ 11.09.2020 թվականին Փաստաբանը ստացել է Դիմողից լիազորագիր:

Փաստաբանը ձեռնարկել է գործողություններ Դիմողի իրավունքների պաշտպանությունը ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման ուղղությամբ՝ 2020-2021 թվականների ընթացքում կատարելով հարցումներ և կազմելով հայցադիմում՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, իսկ Դիմողը 20.11.2024 թվականին Փաստաբանին կրկին տվել է լիազորագիր, սակայն վերջինս փաստացի չի ներկայացրել Դիմողի անունից որևէ հայց:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.2.1-ին ենթակետի համաձայն՝ *փաստաբանի մասնագիտական անկախությունը, պարկեշտությունը, ազնվությունը և բարեխղճությունը փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ քաղաքացու կամ հասարակության վստահության անհրաժեշտ պայմաններ են: Վստահության չարաշահումը անհամատեղելի է փաստաբանի կոչման հետ:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են նաև մի շարք այլ պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի բարձր մասնագիտական պատրաստվածությունը և անհրաժեշտ գործնական փորձի առկայությունը, որի հետ էլ փոխկապակցված է վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականության պատշաճ կատարումը:

Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի բխում են կնքված պայմանագրի որոշակի առարկայից կամ վստահորդի կողմից տրված հստակ հանձնարարությունից, և արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար, ինչի հետ էլ փոխկապակցված է փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում անհրաժեշտ որոշակիության և կանխատեսելիության ապահովումը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում վերը նշված պահանջների խախտմանը, արձանագրում է, որ Պայմանագրի շրջանակներում հստակ սահմանվել է այն ծառայության ծավալը, որի հաշվառմամբ Փաստաբանը պետք է կատարեր գործողություններ Դիմողի շահերի պաշտպանության ուղղությամբ՝ դեռևս 2020 թվականի սեպտեմբերից, երբ նաև ստացել էր Դիմողի կողմից լիազորագիր:

Հանձնաժողովը հարկ է համարում փաստել, որ Փաստաբանն ըստ էության ձեռնարկել է գործողություններ Դիմողի իրավունքների պաշտպանությունը ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման ուղղությամբ՝ 2020-2021 թվականների ընթացքում կատարելով հարցումներ և կազմելով հայցադիմում՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին:

Չնայած նշվածի, Փաստաբանն, այնուամենայնիվ, չի ներկայացրել ոևէ ապացույց առ այն, որ Դիմողի անունից դատարան ներկայացրել է որևէ հայցադիմում: Այլ կերպ ասած, եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, որ Պայմանագիրը կնքվելուց հետո Դիմողը Փաստաբանին փոփոխել է հանձնարարությունը և Փաստաբանից պահանջել իրականացնել իր շահերի պաշտպանությունն այլ ուղղությամբ, ապա նույնիսկ այդ պարագայում, Փաստաբանը հարցումները 2020-2021 թվականների ընթացքում կատարելուց և հայցադիմում կազմելուց բացի մոտ 4 տարի որևէ այլ գործողություն չի իրականացրել, որն ուղղված կլիներ պատրաստի հայցադիմումը դատարան ներկայացնելուն:

Այսինքն, Դիմողը փաստացի լիազորել է Փաստաբանին իր իրավունքներն ու շահերը պաշտպանելու ուղղությամբ, տվել է նրան որոշակի հանձնարարություն, սակայն Փաստաբանը իր պարտականություններն ամբողջ ծավալով չի կատարել, ինչի արդյունքում Դիմողի անունից որևէ հայց դատարանում փաստացի չի հարուցվել, որպիսի պայմաններում Դիմողի օգտին մինչ այդ կատարված գործողությունները ձեռք են բերել ձևական բնույթ և չեն ծառայել վերջնական նպատակին:

Այս համատեքստում, Հանձնաժողովը փաստում է, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունների համաձայն՝ Դիմողի վերաբերյալ առկա է միայն թիվ ԵԱՆԴ/1770/02/10 քաղաքացիական գործը, որը հարուցվել է 01.12.2010 թվականին ներկայացված Դիմողի հայցի հիման վրա, մինչդեռ Փաստաբանի կողմից Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնելու պահից՝ 2020 թվականի սեպտեմբերից, փաստացի նոր գործ առկա չէ, իսկ Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ Դիմողի անունից առնվազն ուղարկել է որևէ հայցադիմում դատարան:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի ու Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ փաստաբան Մարետա Վազգենի Բաբայանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.1-ին, 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) փուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Տվյալ պարագայում, հարկ է ընդգծել, որ գործի նյութերով հաստատված է համարվում, որ Փաստաբանը 2020 թվականից ընդհուպ մինչև Դիմողի կողմից Պալատին հաղորդում ներկայացնելը, փաստացի չի ներկայացրել որևէ հայց, ինչի արդյունքում Դիմողն ըստ էության 4 տարվա ընթացքում չի ստացել իրավական օգնություն այն հարցի կապակցությամբ, որի համար դիմել էր Փաստաբանին:

Հանձնաժողովը հաշվի է առնում փաստաբան Մարետա Վազգենի Բաբայանի անձը բնութագրող հանգամանքները, այդ թվում նաև՝ կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է «նկատողություն», կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Մարետա Վազգենի Բաբայանի (արտոնագիր՝ թիվ 124) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.1-ին, 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25061-2-Ա
04 հունիսի 2025թ.
ք.Երևան